# ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## Գավառ համայնքի 2025-2029թթ. երիտասարդական քաղաքականության և հարակից փաստաթղթերի համադրական ուսումնասիրություն

Սույն հետազոտական աշխատանքը հիմնված է 2025թ. մարտի 5-ին «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի[1] և Գավառ համայնքի կողմից ընդունված համապատասխան իրավական ակտերի վրա: Մեթոդաբանական առումով կիրառվել են վերլուծական և համադրական մեթոդներ:

Մինչ համայնքների միավորումը ՀՀ Գեղարքունիքի մարզն ուներ 92 համայնքներ, որից 5-ը քաղաքային, 87-ը գյուղական համայնքներ էին: Միավորման գործընթացից հետո համայնքները դարձել են 5-ը:

Գավառ բազմաբնակավայր համայնքը ձևավորվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021թ. սեպտեմբերի 24-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն (ՀՕ 328-Ն)[2]:

Ներկայումս Գավառ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Գավառ քաղաքը և Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովազարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս և Սարուխան գյուղերը:

2022թ.-ից համայնքում գործում է «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը, որը համայնքային (Գավառի համայնքապետարան) և միջազգային ու տեղական ՀԿ գործընկերների (ՅՈՒՆԻՍԵՖ, Գյումրու ԵՆԿ) աջակցությամբ ոչ ֆորմալ կրթության և խորհրդատվության ոլորտում սպասարկում է համայնքի 13–18 տարեկան մոտ 400–500 երիտասարդ շահառուների:

2024թ.-ից ի վեր Գավառի համայնքի կողմից երիտասարդական աշխատանքի իրականացման և համակարգման նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր:

2024թ.-ին Գավառ համայնքը ճանաչվել է Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու կողմից 2024 թվականի դեկտեմբերի 30-ին ընդունված № 372-Ա որոշմամբ[3] հաստատվել է Գավառ համայնքի 2025-2029 թվականների երիտասարդական քաղաքականությունը: Վերջինիս համար հիմք է հանդիսացել «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ-ի կողմից կատարված «Գավառ համայնքի երիտասարդների քաղաքացիական մասնակցության հետազոտության արդյունքների վերլուծությունը»[4], որում հատկանշական են հետևյալ տվյալները:

1. «Ինչ վերաբերում է երիտասարդական քաղաքականությանը, երիտասարդների միայն 17%-ն է տեղյակ, թե որ կառույցն է դրանով զբաղվում: Որպես կառույցի անուն՝ մեծամասնությունը (83%) նշել է մարզպետարանը»:
2. «Հարցվողների միայն 30%-ն է տեղյակ, թե որ կառույցն է պատասխանատու Գավառ խոշորացված համայնքի բյուջեի հաստատման համար»:
3. «Մասնավորապես, ընդգծվում են որոշումների կայացման և քաղաքականության մշակման գործընթացներում երիտասարդների մասնակցության սահմանափակ մեխանիզմների և երիտասարդների սոցիալական մասնակցության և ներգրավվածության ապահովման խնդիրները»:

---

[1] https://www.arlis.am/hy/acts/204846/latest
[2] https://www.arlis.am/hy/acts/156516
[3] https://gavarihamaynqapetaran.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=d170ada0-2dee-483e-bf1b-fe09239461aa
[4] https://gavarihamaynqapetaran.am/upload/DocFlow/Projects/Mo251131428599285_YouthResearch-Report-BLEJANNGO-07112024.pdf

Անցնելով համադրական վերլուծությանը՝ նշենք, որ Գավառ համայնքի 2025-2029 երիտասարդական քաղաքականության իրականացման նպատակով 2025 թվականի գործողությունների պլանով[5] (այսուհետ՝ Գործողությունների պլան) նախատեսված քայլերի համար «Ֆինանսական աղբյուրներ և ռեսուրսներ» սյունակում բոլոր գործողությունների դիմաց առաջին տեղում նշված է «Համայնքի բյուջե»: Սակայն, ուսումնասիրելով Գավառ համայնքի բյուջեի 2025թ.-ին նախատեսված ծախսերի նախահաշիվը[6], նկատում ենք, որ բյուջեում Գավառ համայնքի 2025-2029 երիտասարդական քաղաքականության իրականացման նպատակով 2025 թվականի գործողությունների համար համապատասխան տող նախատեսված չէ:

Գործողությունների պլանում չկան նաև կատարման չափիչ հանդիսացող նվազագույն շեմեր:

Գործողությունների պլանում նշված դոնորների ցանկի բաց նկարագրության մեջ ներառված է նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID), իսկ ԱՄՆ նախագահի 2025թ.-ի հունվարի 20-ի (Reevaluating and Realigning United States Foreign Aid) հրամանագրի[7] համաձայն՝ բոլոր արտաքին զարգացման նոր գումարների՝ պարտավորությունների և հատկացումների տրամադրումը դադարեցվել է:

Նկատենք, որ «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի[8] և Գավառի համայնքի ավագանու կողմից 2023թ. դեկտեմբերի 13-ին ընդունված «Գավառ համայնքում երիտասարդական ոլորտի զարգացման 2024 թվականի գործողությունների պլանի»[9] միջև առկա է հակասություն: Ըստ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին ենթակետի՝ «Երիտասարդ է համարվում 13-35 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձը», իսկ Գավառ համայնքում երիտասարդական ոլորտի զարգացման 2024 թվականի գործողությունների պլանի համաձայն՝ «Երիտասարդը՝ պատանեկության և մեծահասակության տարիքի մեջ գտնվող 13-30 (ներառյալ) տարեկան ինքնուրույն անձն է»: Ակնհայտ է, որ գործողությունների պլանով սահմանված երիտասարդի տարիքային միջակայքը պետք է համապատասխանեցվի «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքով սահմանված տարիքային միջակայքին (13-35):

Գավառի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանն (ՏԱՊ)[10] ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ նախատեսված 15 ծրագրերից ոչ մեկում ներառված չեն Գավառ համայնքի երիտասարդական քաղաքականության գործողությունների պլանով նախատեսված համապատասխան աշխատանքներ:

Այսպիսով անհրաժեշտ է, որպեսզի երիտասարդների մասնակցությունը խրախուսող ցանկացած քաղաքականություն կամ ծրագիր համահունչ լինի ոլորտային օրենսդրությանն ու համայնքային մակարդակում ընդունված իրավական ակտերին, ներառված լինի բյուջեում և տարեկան աշխատանքային պլանում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025-2029 թվականների երիտասարդական քաղաքականության կիրառման և կենսագործման համար առաջարկում ենք.

- այն համապատասխանեցնել ոլորտը կարգավորող իրավական նորմերին ու որոշումներին՝ նպաստելով ավելի փոխկապակցված փաստաթուղթ լինելուն,

[5] https://gavarihamaynqapetaran.am/upload/DocFlow/CouncilorDrafts/Mo251061018202139_8__2025_1.pdf
[6] https://gavarihamaynqapetaran.am/Pages/NewBudget/outPlan/List.aspx
[7] https://www.whitehouse.gov/presidential-actions/2025/01/reevaluating-and-realigning-united-states-foreign-aid/
[8] https://www.arlis.am/hy/acts/204846
[9] https://gavarihamaynqapetaran.am/upload/DocFlow/Projects/We2312271428457185_2024.pdf
[10] https://gavarihamaynqapetaran.am/Pages/DocFlow/Def.aspx?a=v&g=eb9bc46f-e85c-4137-8e98-f9d44f332244

- ներառել կատարման ցուցիչ հանդիսացող նվազագույն չափորոշիչներ,
- գործարկել երիտասարդների իրազեկվածության բարձրացման և նրանց մասնակցության ընդլայնման առավել գործուն մեխանիզմներ։

Միաժամանակ առաջարկում ենք «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025-2029 թվականների երիտասարդական քաղաքականության»[11] երկրորդ բաժնի «Քաղաքականության հիմնական ուղղությունները՝ ըստ երիտասարդության կարիքների և խնդիրների» հատվածի «Երիտասարդների զբաղվածության ու ձեռնարկատիրական գործունեության խթանում» ուղղության «գործողություն[12]» այնունակում ավելացնել «Համայնքում գործունեություն ծավալող ու աշխատանքային փորձ/հմտություններ/կարողություններ ունեցող երիտասարդների շարունակաբար համալրման հնարավորությամբ» թվային բազա։

---------- **Վարդան Գարեյան**

**Հետազոտական-վերլուծական կենտրոնի համակարգող, Գեղարքունիք**

**26.09.2025թ.**

[11] https://gavarihamaynqapetaran.am/upload/DocFlow/Projects/Mo251131428599185_20252029.pdf
[12] https://gavarihamaynqapetaran.am/upload/DocFlow/CouncilorDrafts/Mo251061018202139_8__2025_1.pdf